

ՆԵԱՄԻՐԱԿԱՆ

ՍԱՐԴՈՆԻ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԸ

Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Խ Տ Ա Կ

22. Իր հօրը հարկէն աւելի, յաւելածականորէն գրի իր վրայ. 23. յետոյ, ապուռն⁽⁸⁵⁾, թագաւորութիւնը ապահովեւ համար, 24. բոլոր արաբները ընդվզել աւ ճաթային դէմ. 25. (բայց) ես, Ասորեստանի թագաւորը, թագաւոր չորս ծագերու, 26. որ կը սիրէ ճշարտութիւնը, և նենգութիւնը խորշանքն է իրեն, 27. իմ մարտիկ զունգերը յթայի օգնութեան 28. զրկեցի, և կոխարտեցին բոլոր արաբները. 29. Ուապուռն, և իր հետ (գտնուող) զինուորները, կաւանքներու մէջ նետեցին, և 30. բերին նծի, և վանդակեցի գիրենք, և 31. այեցի գիրենք աւագ դրանս ագուցակին. 2. Ուլիսը, Բարթաքայի պետը, 33. սնատանան, Բարթաքայի պետը, 34. ամաթէան, Ուրազազապուռնայի պետը, 3. Մարաստանը, որոնց տեղը հեռու է, որս, թագաւորներուն՝ հայրերուս (օրով) 3. Հէին արչաւած Ասորեստանի սահմանը, և ոչ ալ կոխած իր հողը. 37. Տիրոջս, Աշուրին շքեղութեան սարսափը, զգետնեց գիրենք. 38. մեծ երիվարներ, քարահատոր(ներ)⁽⁸⁶⁾, լրջաքար(եր) իր լեռնէն կտրուած⁽⁸⁷⁾, 39. դէպի Նինուէ, տէրու թեանս քաղաքը բերին, և համբուրեցին ոտքերս. 40. քանի որ, (այսպիսի) առաջնորդներ, անոնց դէմ ձեռք բարձրացուցած էին, 41. աղաչեցին տէրութիւնս, և դաշինք խնդրեցին. 42. սպաներս, իրենց երկրին սահմանային վերակացուները, 43. իրենց հետ զրկեցի, և այդ քաղաքները բնակող ժողովուրդը 44. ոտնակոխ ըրին, և խոնարհեցուցին իրենց ոտքերուն. 45. հարկ (և) տուրք տէրութեանս համար, գրի իրենց վրայ. 46. Բաթուշարի՝ գաւառ մը, աղային⁽⁸⁸⁾ երկիրներու կողմը, 47. հեռաւոր Մարաստանի մէջ, Պիզնիի սահմաններուն վրայ՝ լրջաքարի լեռան, 48. զոր թագաւորներուն՝ հայրե-

րուս միջև, ոչ ոք էր կոխած իրենց երկրին հողը, 49. Սիտիրբառնան, Էբարնան, հզօր պետեր, 50. որոնք չենթարկուեցան իմ լուծին, իրենք և իրենց ժողովուրդը, 51. իրենց ձիերը, եղերը, հօտերը, (և) երկսպաստանի ուղտերը, 52. իրենց մեծագին աւարը, փոխադրեցի Ասորեստան. 53. Պազու⁽⁸⁹⁾, հեռաւոր վայր (գտնուող) գաւառ մը, 54. անապատի ճամբայ մը, աղային հողամաս մը, (և) ծարաւի տեղ մը. 55. հարիւրքսան երկվեցեակ ժամ, աւագային հողամասի, եկքանի և կարմրագոյն քարի⁽⁹⁰⁾, 56. ուր օձեր և կարիճներ, մըրջիւններու պէս, կը վխտային գետնի⁽⁹¹⁾ վրայ. 57. քսան երկվեցեակ ժամ, խազուի⁽⁹²⁾ երկրէն, (որ է) երկնաքարի⁽⁹³⁾ լեռ մը, 58. ետևս լքեցի, և անցայ, 59. այդ գաւառը, որ հին ժամանակներէն սկսեալ, 60. ոչ մէկ, ինձմէ առաջ, նախորդ թագաւոր եկած էր. 61. Տիրոջս՝ Աշուրին հրամանով, յաղթապանծօրէն հոն քաղեցի. 62. Գիսուռն⁽⁹⁴⁾, խալտիլի թագաւորը, Ագապուռն⁽⁹⁵⁾, Իլիթաթուի⁽⁹⁶⁾ թագաւորը, 63. Մանսագուռն⁽⁹⁷⁾, Մակալանի⁽⁹⁸⁾ թագաւորը, 64. Եաքա Ղշոնն՝ Տիսրանի⁽⁹⁹⁾ թագուհին, 65. Սապիսուռն՝ Քատապայի թագաւորը, 66. Նիխարուռն՝ Կաուանի⁽¹⁰⁰⁾ թագաւորը, 67. Պազուռ Ղշոնն՝ Իսիլուամի թագուհին, 68. Սապազիրուռն՝ Պուտայի թագաւորը, 69. ութը թագաւոր, այս գաւառի մէջէն, սպանեցի, 70. զարիի պէս կամեցի իրենց մարտիկներուն զիակաները. 71. իրենց աստուածները, իրենց ինչքերը, իրենց աստուածքները, 72. փոխադրեցի դէպի Ասորեստան. Լալիէ՝ 73. Եատի թագաւորը, որ գէնքերուս առջեւէն փախած էր, 74. իր անձին նկատմամբ (ունեցած) իր սարսափը, հարուածեց զինքը, և դէպի Նինուէ, 75. եկաւ իմ ներկայութեան, և ոտքերս համբուրեց. 76. գթացի իր վրայ, և Պազիի այդ գաւառը, 77. իրեն յանձնեցի. 78. զօրութեամբը Աշուրին, Սինին, Շամաշին, Նապուլին, Մարտուքին, Նինուէի Իշթարին, 79. (և) Արպէլայի Իշթարին, նուաճեցի բոլոր ամբարիշտ ոսոխները. 80. հրամանովը իրենց աստուածու թիւններու՝ իշխանները հակառակորդներուս, 81. եղգներու պէս (զօրս) փոթուրիկը կը ծռէ, 82. ծովաբնակ թագաւորները, որոնց պատերն էին ծովը, 83. որոնց

ամբողջ էր հեղեղը, որոնք կը վարէին նաւ մը, կառքի⁽¹⁰¹⁾ մը պէս, 84. թիւեր էին լծուած (հոն) փոխանակ ձիերու. 85. վախէն ընկճուեցան, բաբախեցին իրենց սրտերը, և

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ Ս Ի Ի Ն Ա Կ

1. զգալուեցին⁽¹⁰²⁾ (իրենց) մաղձը, չունէին ոչ մէկ մրցակից, իմ գէնքերը ընդգիմութիւն չէին գտներ, 2. և զլա նախորդող իշխաններուն միջև, ոչ ոք կը հաւասարէր ինծի. 3. անոնք, որոնք այսպէս նա չէին հայրերս՝ թագաւորները, և հակառակութեամբ ընդգիմադարձած, 4. Աշուրին՝ տիրոջն հրամանով, ձեռքերուս մէջ ինկան. 5. գծուարամատոյց պատեր, որոնց քարերը փշրեցի, բրուտի անոթին պէս. 6. իրենց անթաղ մարտիկներուն զիակ- (ները) կերցուցի գալլին. 7. իրենց պահուած ինչքերը Ասորեստան փոխադրեցի. 8. աստուածները՝ իրենց նեցուկները, իբրև աւար հաշուեցի. 9. ոչխարներու պէս, քշեցի իր բարդաւաճ ժողովուրդը. 10. անոր, իր կեանքը փրկելու համար, ծովուն մէջտեղ, խոյս էր տուած, 11. իմ թակարգէն չի կրցաւ խուսափիլ, և չազատեց իր կեանքը. 12. աշխոյժ երիվարը հասաւ բազրիկները, 13. թռչունի մը պէս, լեռնէն որսացի զայն, և կապեցի իր թևածայրերը. 14. իրենց արիւնը, ճեղքուած (թումբի) մը պէս, հոսել տուի լեռներու զառթափէն.

Տ Ա Ս Ե Բ Ո Ր Դ Տ Ա Խ Տ Ա Կ

15. Սուրբէնները՝ վրանարնակները, որոնց տեղը հեռու է, 16. ամպրոպի կատաղի բախիւնին պէս, խլեցի իրենց արմատները. 17. անոնք, որոնք ծովը համարած էին իր (իրենց) ամբողջը, լեռը իր (իրենց) ամբողջիւնը, 18. ոչ մէկը, խուսափիլ տուի ծուղակէս, 19. ոչ իսկ, դասալիք մը փախաւ. 20. հրամայեցի որ, ծովայինները լեռներու մէջ, և լեռնայինները ծովու մէջ բնակին. 21. Աշուրին՝ տիրոջն հրամանով, իմ մրցակիցը ո՞վ կրնայ ըլլալ. 22. թագաւորութեան մէջ, կամ թագաւորներուն, հայրերուս միջև, 23. որո՞ւն իշխանութիւնը, փառաւոր էր իմինէն ա-

ւելի. 24. ծովէն, սապէս կը խօսէին իմ ոտխները. 25. «Ո՞րք կրնայ երթալ աղուէսը, արեւու առջևէն». 26. էլամը (և) Գուլթուն՝ ամբարտաւան իշխաններ, 27. որոնք թշնամութեամբ պատասխանած էին, թագաւորներուն՝ հայրերուս. 28. Աշուրի տիրոջն զօրութեան մասին, զոր գործադրած էի բոլոր թշնամիներուս վրայ, 29. լսեցին, և ահ և սոսկում տեղաց իրենց վրայ, 30. որպէսզի, ոչ մէկ ոտնձգութիւն (պատահի) իրենց լեռներու սահմաններուն վրայ. 31. իրենց պատգամաւորները⁽¹⁰³⁾, սիրոյ և խաղաղութեան համար, 32. զէպի Նինուէ, իմ ներկայութեան զրկեցին, և 33. մեծ աստուածներու անունով երդուեցան. Աշուր, Շամաշ, Պէլ և Նապու, 34. Նինուէի իշխարը, Արպէլտի իշխարը, ոտխներուս վրայ, 35. յաղթակածօրէն զիս կարգելէն վերջ, հասայ և ես, իմ օրտի փափաքին. 36. բաղմաթիւ թշնամիներուս նուաճումին մէջ, 37. զորս, մեծ աստուածներու՝ տէրերուս ձեռնտուութեամբ, ձեռքերս էին գրաւած, 38. Ասորեստանի և Աքքատի տաճարները կանգնել տուի, և 39. արծաթով, սկիւղով պատեցի, և շողշողացուցի ցօրեկուայ պէս. 40. այդ օրերուն, Նինուէի ճակտի պալատը, 41. զոր իմ հայրերը՝ նախորդ թագաւորներն էին կառուցած, 42. բանակատեղիի կարգաւորութեան համար, (և) մատակարարելու պահպանութեան, 43. ջորիներ, կառքեր, գէնքեր, պատերազմի պիտոյք, 44. և թշնամիին աւարը, ամէն տեսակի, 45. զորս, Աշուր՝ թագաւորը աստուածներու նուիրեց իրբև թագաւորութեանս բաժինը, 46. ձիերու հոգածութեան (և) կառքերու գործածութեան համար. 47. այդ վայրը, շատ փոքր էր ինծի համար, և երկիրներու ժողովուրդները, 48. աղեղիս կողոպուեալ, իրենց բերել տուի մարկեղը (և) աղիւտի կազապարը, և 49. (չայրուած) աղիւտներ պատրաստեցին. Այդ պղտիկ պալատը, 50. բոլորովին քանդեցի, և ընդարձակ հողմաս մը, 51. իբրև յաւելուած, զաշտեցէն յապաւեցի, և 52. աւելցուցի անոր վրայ՝ Կրաքարով, տոկուն լեռներու քարով, 53. նետեցի իր հիմը, և գարատափ մը լեցուցի. 54. ժողովեցի Հիթիթի թագաւորները և անգր-գետի⁽¹⁰⁴⁾

Ն Օ Թ Ե Ր

85. Winckler կը նոյնացնէ զայն արա-
բական Wahabին հետ:

86. Daggas յատուկ անուն մը չէ հոս,
այլ հասարակ, steinblock «քարահատոր»
նշանակութեամբ, տես Poebel, Mitteilungen
der Vorderasiatischen Gessellschaft, 1921, էջ 36:

87. Կարգալ՝ hi-ib "broken," և ոչ թէ
R. C. Thompsonի արտագրութեամբ ti-ib
"the choice (product)" որովհետեւ, ti բնեւա-
զիբը, ունի նաեւ hi, he, վանկային-ձայն-
նական արժէքները, Chrestomathie Accad-
ienne, Paul Naster, Louvain, 1941, էջ 14:

88. Bit tabti «աղային երկիր», սոււմ.
E-Mun, էլլպուրգ լեռներու (Պիլլի, Տէմա-
լէնտ) հարաւային-հարաւ-արեւելեան կողմը
կը տարածուի, զոր թագազաթփաղասար
երրորդ, իրբե հիւսիսային սահմանը իր
կայսրութեան կը յիշատակէ, Zeitschrift für
Assyriologie, 1936, էջ 183:

89. mātu Ba-a-zu, Ս. Գրական ԴԴ է LXX
'Քնէ, Երեմ. XXV, 23, El-Djofի և Teimaի
կամ el-Elaի միջև, Revue Biblique, 1911,
էջ 104. Ludwig Koehler, Lexicon In Veteris
Testamenti Libros, Leiden, 1948, էջ 113:

90. abnu Ka sabiti «վիթի բերան» վար-
դագոյն քար մըն է, կարմիր գոյնով, սոււմ.
ka-gi-nā, արիւնաքար (hématite). R. C.
Thompson, A Dictionary of Assyrian Chemis-
try & Geology, Oxford, 1936, էջ 87:

91. Ugaru աքքատացած ձևն է սկըզբ-
նական սուսերականն à-garի:

92. mālu Ha-zu-u, բաղդատեւ Ս. Գրական
ԴԴ LXX Aξω, Ծնն. XXII, 21. Forrer կը
նոյնացնէ զայն El-Haşaի հետ, Nedschdի,
Պարսկական-ծովածոցի և Բաբելոնի միջև,
Reallexicon für Assyriologie, հատ. I, 1932,
էջ 441:

93. abnu Shaggilmut այն քարն է որ կը
փրթի երկնքէն, որոտախառն անձրևի մը
լնթացքին, պարունակուած ըլլալով միջին
երկնքի մէջ, պարսաքարի մը կտրուածքով,
և թերեւս իր մահացու յատկութիւններուն
համար, «մահուայ խաղողի կուտ» grape
stone of death կարելի է թարգմանել զայն,
«օթերեւութաքար» «երկնաքար» meteorite,
կամ «չանթ, կայծակ» thunderbolt, անոր

զիւրիմաց բացատրութիւնն է, R. C. Thomp-
son, A Dictionary of Assyrian Chemistry and
Geology, Oxford, 1936, էջ 112:

94. amāl Kī-i-su, հաւանաբար արաբական
ծագումով كيس, Revue Biblique, 1911, էջ
209:

95. amāl Ak-ba-ru, հաւանաբար արաբա-
կան ծագումով اكبر, R. B. 1911, էջ 209:

96. Il-pi-a-tu F. Hommel կը նոյնացնէ
զայն, Պաղոմէոսի Օլաֆիային հետ, Ethno-
logie und Geographie des Alten Orients, Mün-
chen, 1925, էջ 559:

97. Man-sa-ku, հաւանաբար արաբական
ծագումով منك, R. B. 1911, էջ 209:

98. Ma-ga-la-ni, արաբական հողամաս
մըն է որ կը նոյնանայ Պաղոմէոսի Տախա-
րիներուն հետ. Պաղոմէոս կը զետեղէ Տա-
խարինները Մարիթա լեռներու հիւսիսը,
այսինքն Ուատի-էտ-Տալասիի աջ ափին
վրայ գտնուող ամբողջ հողամասը. Trude
Weiss Rosmarin, Aribi und Arabien in das
Babylonisch-Assyrischen Quellen, Journal of the
Society of Oriental Researchի մէջ, 1932, էջ
35:

99. mātu Di-ih-ra-a-ni, բոս Glaserի, Ja-
mamaի հարաւակողմը, հաւանաբար Wadi
-ed-Dawasirի մէջ. Skizze der Geschichte und
Geographie Arabiens. Berlin, 1890, էջ 268:

100. ālu Ga'-u-a-ni, արաբական ծագու-
մով جو, Zeitschrift für Assyriologie, 1936,
էջ 184:

101. īsu Narkabtu, երբ. מרכב, արաբ.
ماركبة, ասոր. مراكبة, եղիպտ. marakabut,
արամ. מרכב, սոււմ. gish Gigr խորհրդա-
նիշն է:

102. Ma'u բայարմատէն, որ մաղձի
փոխումին համար կը գործածուի, F. Küch-
ler, Beiträge zur Kenntnis der Assyrisch-Baby-
lonischen Medizin, Leipzig, 1904, էջ 42:

103. amāl Mar-shipri, սոււմ. 𐎠𐎵𐎶𐎵 Kin-gi-a
խորհրդանշերէն կը բաղկանայ:

104. E-bir-nari կը ցուցնէ եփրատի ա-
րեմատեան կողմը գտնուող բոլոր երկիրները:

ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱՐԳ. ՉԶՋԱՆԵԱՆ

(Շարունակելի՜ 4)